ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի ծննդյան 70 և գիտական գործունեության 50-ամյակը: Անվանի պատմաբանը արդեն շուրջ կես դար է, որ կատարում է գիտահետազոտական արդյունավետ աշխատանք, հարստացնելով սովետական պատմագիտությունը հայ ժողովրդի նոր պատմության հարցերին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններով:



Մ. Ներսիսյանը ծնվել է Երևանի նահանգի Աշտարակի շրջանի Փարպի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա սովորել Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1927 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1931 թ.՝ ստանալով պատմաբանի մասնագիտություն:

Դեռևս 1930-ական թթ. սկզբներին երիտասարդ պատմաբանը հրապարակեց մի շարք աշխատություններ Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժման պատմության վերաբերյալ: Այդ շրջանում նա լույս ընծայեց հոդվածներ ու գրքեր Ստեփան Շահումյանի, Բաքվի կոմունայի, Մայիսյան ապստամբության, Հայաստանի 1918—1920 թթ. տնտեսական ու քաղաքական դրության մասին և այլն: Պրոֆ. Կ. Ղազարյանի հետ միասին Մ. Ներսիսյանը կազմել է «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում» փաստաթղթերի ծավալուն ժողովածուն, որը լույս տեսավ 1932 թ.:

Հետագա տարիներին Մ. Ներսիսյանը զբաղվեց XIX և XVIII դդ. պատմության խնդիրներով: 1939 թ. նա պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա՝ «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում 1870—1880 թթ.» թեմայով: Այդ ըստ ամենայնի հետաքրքիր և արժեքավոր ուսումնասիրությունը, որ լույս տեսավ 1940 թ., նոր և կարևոր խոսք էր սովետահայ պատմագրության մեջ: Հեղինակը, առաջին անգամ հատուկ քննարկման ենթարկելով հայ նարոդնիկության հարցը, հիմնավորապես հերքեց բավական տարածում գտած այն տեսակետը, թե հեղափոխական նարոդնիկությունը օտար երևույթ է եղել Հայաստանի և Անդրկովկասի համար: Հենվելով արխիվային նյութերի և այլ աղբյուրների հարուստ տվյալների վրա, Ներսիսյանը ցույց տվեց, որ 1860—1880 թթ. Անդրկովկասի հեղափոխական տարաստիհան (ռազնոչին) մտավորականության մի մասը գործուն մասնակցություն ունեցավ համառուսական հեղափոխական իրադարձություններին և որ դեմոկրատական երիտասարդ սերնդի հենց այդ թևի ներկայացուցիչներն էին, որ ընդգրկվեցին հեղափոխական նարոդնիկական շարժման մեջ՝ ինչպես Թբիլիսիում, Ռոստովում, այնպես էլ Մոսկվայում, Պետերբուրգում, Կիևում և Ռուսական կայսրության մյուս քաղաքներում:

Աշխատության մեջ բերված են հետաքրքիր տվյալներ հայ նարոդնիկների կյանքի և հեղափոխական գործունեության, նրանց հայացքների ու ծրագրերի մասին: Նկատենք, որ վերջին ժամանակներս մի շարք հետազոտողների կողմից կատարված արխիվային պրպտումները (օրի-

նակ. Ա. Դ. Տերեշչենկոյի «Նորնախիջևանցիները հեղափոխական նարոդնիկական շարժման մեջ» հոդվածը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4), հայտաբերելով նոր տվյալներ հայ նարոդնիկների վերաբերյալ, լիովին հաստատում են Մ. Ներսիսյանի տասնյակ տարիներ առաջ գրված աշխատության թեզերն ու եզրակացությունները:

Պրոֆ. Մ. Ներսիսյանի գիտական աշխատությունների մեջ զգալի տեղ են գրավում այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության հարցերին: Պատմաբանն իր «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ.» մենագրությունը որպես դոկտորական դիսերտացիա հաջողությամբ պաշտպանեց դեռևս 1946 թ.: Այդ ծանրակշիռ գիտական հետազոտությունը, որը լույս տեսավ 1955 թ., ոչ միայն դժվարություններ հաղթահարելուց հետո, աշխի է բնկնում հարցերի խորը, բազմակողմանի ընդարկմամբ, նոր և համարձակ մտքերով ու եզրահանգումներով: Իր այս աշխատության մեջ հեղինակը վաստակաշատ նյութի հիման վրա հանդամանորեն պատկերում է արևմտահայության ծանր կացությունը XIX դարի 50—80-ական թթ., շարադրում նրա հերոսական մաքառումը, ազատագրական շարժման ընթացքը, բացահայտում է այդ շարժման կապերը հարևան ժողովուրդների հակասուլթանական ընդվզումների հետ, հայ ազատագրական պայքարի սոցիալ-դասակարգային բովանդակությունը և շարժիչ ուժերը, արևմտյան պետությունների ռեակցիոն, հակահայկական դիրքորոշումը և այլ հարցեր: Վճռականորեն ժխտելով հակագիտական այլևայլ «տեսություններ», Մ. Ներսիսյանը համոզիչ, անվիճելի փաստերով ցույց է տվել արևմտահայ ազատագրական շարժման ինքնաբուխ, ժողովրդական-համազգային բնույթը, նրա գաղափարախոսության առաջադեմ և դեմոկրատական էությունը:

Առանձին ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ 1940-ական թթ. կեսերին ստեղծված այդ կապիտալ գործում տեղ չեն գտել գոնիկ սոցիոլոգիզմի «օրթոդոքս առաքյալների» տեսակետները: Մերժելով դրանք և ցուցաբերելով գիտական օբյեկտիվություն Ներսիսյանը նիշտ դիրքերից է լուսաբանել մեր ժողովրդի պատմության այդ շրջանի շատ հանգուցային խնդիրներ, որոնց թվում Ռափայել Պատկանյանի, Բաֆֆու, Դ. Արծրունու, Դ. Սրվանձտյանի և մյուսների առաջադեմ դեմոկրատական գաղափարների գնահատության հարցերը: Սխալ չի լինի երբ ասենք, որ պատմաբանի այս աշխատությունը գիտական մի սխրանք էր՝ ուղղված բարացած դոգմատիզմի այն գոնիկ «տեսությունների» դեմ, որոնք իր ժամանակ ստեղծվել էին ջոչափվող պրոբլեմի շուրջը և տակավին չէին հաղթահարվել: Ներսիսյանի մենագրությունը ամենայն իրավամբ բարձր գնահատականի արժանացավ ինչպես հանրապետական, այնպես էլ կենտրոնական մամուլում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», *«Вопросы истории»*, *«История СССР»*, *«Советское востоковедение»* և այլն):

Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» դոկտորական դիսերտացիան փաստորեն սկիզբ դրեց արևմտահայ ազգային-ազատագրական շարժման գիտական ուսումնասիրության գործին սովետահայ պատմագրության մեջ: Այդ խնդրի շուրջն այնուհետև հանդես եկան նրա ղեկավարությամբ աշխատող մի շարք երիտասարդ գիտնականներ, ապա ուրիշ պատմաբաններ:

Նշված մենագրությունից բացի Ներսիսյանը գրել է հոդվածներ Զեյթունի 1862 թ. ապստամբության, արևմտահայերի կոտորածների, հայ ազատագրական պայքարի հերոս Անդրանիկի և հարակից այլ հարցերի մասին: Նրա առաջարանով ու խմբագրությամբ 1966 թ. լույս տեսավ «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի կապիտալ և շատ արժեքավոր ժողովածուն, ուր ամենայն մանրամասնությամբ ցույց է տրված սուլթան Աբդուլ Համիդի և երիտասարդ թուրքերի՝ մասսայական կոտորածների արյունոտ քաղաքականությունը արևմտահայերի նկատմամբ: Ժողովածուն, որ պարունակում է բազմաթիվ նորահայտ արխիվային փաստաթղթեր և կարևոր այլ նյութեր, մի անհերքելի պատմական տարեգրություն է թուրք ջարդարարների անասելի ոճրագործությունների և արևմտահայության մեծ ողբերգության մասին:

Մ. Ներսիսյանի գիտական ուսումնասիրությունների մի մասը նվիրված է հայ-ռուսական պատմական կապերի ու հարաբերությունների պրոբլեմին: Դեռևս 1944 թ. լույս տեսավ նրա «Ա. Վ. Սուվորովը և ռուս-հայ հարաբերությունները 1770—1790-ական թթ.» աշխատությունը, որը հետագայում, որոշ լրացումներով ու փոփոխություններով, հրատարակվեց նաև ռուսերեն լեզվով: 1956 և 1961 թթ. լույս տեսավ Ներսիսյանի «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» երկու հատորից բաղկացած հոդվածների ժողովածուն (ռուսերեն), որտեղ

քննարկվում են հայ-ռուսական պատմական կապերին ու քաղաքական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր: Այդ թեմաներին նա անդրադարձավ նաև հետագա տարիներին՝ գրելով մի շարք հոդվածներ, որոնցում մասնավորապես լուսաբանվում են Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և այդ ակտի պատմական նշանակությունը, հայ ժողովրդի ռուսական օրիենտացիան XVIII և XIX դդ., Դ. Վ. Դավիդովը Հայաստանում (1826 թ.), Օշականի ճակատամարտը 1827 թ. օգոստոսի 17-ին, Երևանի ազատագրումը ռուսական բանակի կողմից 1827 թ. և այլն: Ներսիսյանը զգալի գործ է կատարել նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը վերաբերող փաստաթղթերի ճայանաբերման ու հրատարակման ուղղությամբ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Մ. Ներսիսյանի ուսումնասիրություններ ռուս առաջին փառապանծ հեղափոխականների՝ դեկաբրիստների վերաբերյալ: 1958 թ. հրատարակվեց նրա «Դեկաբրիստները Հայաստանում» մեծարժեք աշխատությունը, որի ռուսերեն բարգմանությունը լույս տեսավ 1975 թ.: Այստեղ հեղինակը, օգտագործելով արխիվային նարուստ նյութեր, վերականգնում է Կովկաս աքսորված դեկաբրիստների թիվն ու ցուցակը, ցույց է տալիս 1825 թ. հերոսների գործուն մասնակցությունը 1826—1828 թթ. ռուս-պարսկական և ապա՝ 1828—1829 թթ ռուս-թուրքական պատերազմներին, այդ հեղափոխականների դերը Արևելյան Հայաստանը պարսկական խաների ու բեկերի ծանր լծից ազատագրելու գործում: Աշխատության մեջ բերված են հետաքրքիր տեղեկություններ դեկաբրիստների և հայ, վրացի ու ադրբեջանցի գործիչների կապի մասին, ինչպես նաև ցույց են տրված այն ջերմ բարեկամական հարաբերությունները, որոնք ստեղծվեցին կովկասյան բանակ փոխադրված ռուս հեղափոխականների ու լեհ ապստամբների միջև:

Աշխատելով «Դեկաբրիստները Կովկասում» թեմայի վրա, Ներսիսյանը հայտնաբերել է արժեքավոր փաստաթղթեր տվյալ հարցի վերաբերյալ: Հիշենք, որ նա առաջինը հայտնաբերեց ու հրապարակեց դեկաբրիստներ Ե. Լաչինովի գրառումները Հայաստանի, Դ. Իսկրիկցու և Վ. Վոլխովսկու նամակները Անդրկովկասի, Ի. Բուրցովի զեկուցագրերը ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմի մասին և այլն: Հատկապես պետք է նշել Ներսիսյանի «Նոր տվյալներ դեկաբրիստների մասին» հոդվածը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4), ուր բազմաթիվ նոր տվյալների հետ մեկտեղ բերված են խիստ կարևոր տեղեկություններ Ուկրաինայում ապստամբած հայտնի Զեոնիգովյան գնդի զինվորների սոցիալական ու ազգային կազմի մասին:

Գիտական լուրջ ուսումնասիրություն է Մ. Ներսիսյանի «1812 թ. հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները» աշխատությունը, որը լույս տեսավ 1965 թ. ռուսերեն լեզվով: Պատմական նոր փաստերի ու հարուստ նյութերի հիման վրա այս հետազոտության մեջ ցույց է տրված Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, Կովկասի լեռնականների, Կուբանի կազակների, կալմիկների մասնակցությունը ռուս ժողովրդի 1812 թ. համաժողովրդական հայրենական պատերազմին և թուրք-պարսկական, ֆրանսիական ու անգլիական դեկավար շրջանների ագրեսիվ հակառուսական քաղաքականության ձախողումը Կովկասում: Գրքում բերված են մանրամասն և նշգրտված տվյալներ Նապոլեոն I-ի բանակի դեմ մարտնչած կովկասցիների, ինչպես նաև պատերազմից տուժած ռուս բնակչությանը օգնելու նպատակով երկրամասում կազմակերպված նվիրատվությունների և այլ միջոցառումների մասին: Գրքում մանրամասնորեն ցույց է տրված կովկասահայության հայրենասիրական շարժումը՝ օգնելու Ռուսաստանին ընդդեմ ֆրանսիական ագրեսորների: Առանձնապես հետաքրքիր են այն տվյալները, որոնք վերաբերում են Նոր Նախիջևանի ու Աստրախանի հայ բնակչությանը:

Պատմաբանը մի շարք արժեքավոր հոդվածներ է նվիրել հայ ժողովրդի պատմության XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարցերին, հասարակական ու մշակութային գործիչներին: Դրանցից առանձնապես պետք է հիշել «Հայ կամավորները ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմում», «Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 1860—1880-ական թթ.», «Աբովյանի առաջին հրապարակային ելույթը», «Առաջին հայ ուտոպիստ-սոցիալիստը» (Դ. Դ. Արշարումով) և այլ հոդվածներ:

Ն. Ներսիսյանի ուսումնասիրություններն աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, գիտական խորությամբ, փաստական նոր և հարուստ նյութի մատուցմամբ, ճշմարիտ ու օրիգինալ տեսակետներով: Նրա աշխատությունները նոր լույս են սփռում մեր ժողովրդի պատմության բազմաթիվ կենսական հարցերի վրա:

Գիտահետազոտական գործունեության հետ մեկտեղ Ներսիսյանը զբաղվել է նաև ման-

կովարժական աշխատանքով: Տարիներ շարունակ նա հայ և ՍՍՀՄ ժողովուրդների պատմություն առարկաներից դասախոսություններ է կարդացել Երևանի Բանֆակում, Կոմհամալսարանում, հայկական և ռուսական մանկավարժական ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում, որտեղ մի շարք տարիներ վարել է հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչի պարտականությունները: Նրա դասախոսությունները օգնել են հազարավոր ուսանողների ձևավորել իրենց աշխարհայացքը: Ներսիսյանը ունեցել է բազմաթիվ ասպիրանտներ, ղեկավարել է շատ երիտասարդ պատմաբանների թեկնածուական և դոկտորական դիսերտացիոն աշխատանքները, մասնակցել է հայ ժողովրդի պատմության դասագրքերի և գիտամասսայական աշխատությունների ստեղծման գործին: Նրա խմբագրությամբ 1972 թ. լույս տեսավ հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (մեկ հատորով): Վերջերս այն լույս տեսավ նաև ռուսերեն լեզվով:

Անվանի գիտնականը նաև ակտիվ հասարակական գործիչ է: Նա երկար տարիներ վարել է պատասխանատու պաշտոններ գիտական և ուսումնական հիմնարկներում: Ներսիսյանը եղել է հանրապետության ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, վիցեպրեզիդենտ, գլխավորել է ակադեմիայի խմբագրական հրատարակչական խորհրդի աշխատանքը որպես նրա նախագահ: 1966—1977 թ. աշխատել է Երևանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում, ավելի քան 28 տարի եղել է ակադեմիայի նախագահության անդամ: Ներսիսյանի նախաձեռնությամբ ու ջանքերով ակադեմիայում կազմակերպվեց արևելագիտության բաժինը, որը հետագայում դարձավ ինստիտուտ, ստեղծվեց «Պատմա-բանասիրական հանդեսը», պետական համալսարանում հիմնվեցին արևելագիտության ֆակուլտետը, հայագիտության կենտրոնը, «Երևանի համալսարանի բաները», «Երևանի համալսարան» պարբերականները:

Ներսիսյանը մասնակցել և մասնակցում է Հայկական սովետական հանրագիտարանի աշխատանքներին որպես նրա գլխավոր խմբագրության անդամ և հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության գիտահյուղային խորհրդի նախագահ: Նա միաժամանակ հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի գլխավոր խմբագրության անդամ է: Երկար տարիներ նա եղել է սովետա-բուլղարական համամիութենական ընկերության հայկական մասնաճյուղի նախագահը:

Մ. Դ. Ներսիսյանը ՍՄԿԿ անդամ է 1938 թ., մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ է եղել 1966—1979 թթ. և ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ՝ 1951—1955 թթ., քանիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսակցության Երևանի քաղաքային կազմակերպության պլենումի և կենտրոնական կոմիտեի անդամ, եղել է ՀԿԿ շրջանային համագումարների պատգամավոր: Նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և մի շարք մեդալներով, այդ թվում բուլղարական «Գեորգի Դիմիտրով» մեդալով: ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1980 թ. նոյեմբերի 24-ի հրամանագրով նա պարգևատրվեց «ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

Ներկայումս Մ. Ներսիսյանը ՀՍՍՀ ԴԱ նախագահության օրգան «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիրն է: 22 տարի անընդմեջ, հանդեսի հիմնադրման տարուց (1958 թ.) մինչև այսօր խմբագրում է այդ պարբերականը և նրա ջանքերը մեծ չափով նպաստել են, որ այն դառնա հայագիտական լուրջ, ծանրակշիռ հանդես: Ներսիսյանը միաժամանակ ՀՍՍՀ ԴԱ պատմության ինստիտուտի հայ-ռուսական պատմական կապերի բաժնի վարիչն է: Այստեղ նրա ղեկավարությամբ պատրաստվում են մի շարք կարևոր աշխատություններ նվիրված հայ-ռուսական հարաբերությունների պատմության կարևոր հարցերին: Պետք է նկատել, որ Ներսիսյանը իր վարած բոլոր պաշտոններում էլ միշտ հանդես է բերել կազմակերպչական ընդունակություն, սկզբունքայնություն և ազնվություն:

Մ. Ներսիսյանի անհանգիստ, պրպտող միտքն այսօր ևս զբաղված է նոր հարցերով, նոր խնդիրներով: Բազմավաստակ գիտնականին ցանկանանք առողջություն և նորանոր հաջողություններ իր ստեղծագործական աշխատանքներում:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ
Պատմ. գիտ. թեկնածու Վ. ՈՍԿԱՆՅԱՆ